

ԲԱԺԱՆՈՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
 Պոլսի համար 12 ֆր.  
 Վեցամսեայ 6 »  
 Արևմտահայերէնի համար 15 »  
 Վեցամսեայ 8 »  
 Ամերիկայի համար 3 ֆր.  
 Վեցամսեայ 1.50 »  
 ԿԱՆԻՍԻՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ  
 Իրանացիներու համար 40 անգլիսի  
 է. իսկ վերջին երեսի համար 20 անգլիսի է. երեսին  
 անգլիսի անգլաներու համար 20 օնց զիջել կրնայ :  
 Վառձայի համար ձեռքի 10 ւ

# ՇԱՆՏՈՒՄ

ԼՈՒՊԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 Ը ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԵՔՆԱՐԹԻ ԵՒ ԳՅԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Նստակի կէ դրու՛մ դրկէյ  
 Ինքուրու բնակն հասցէիկ  
 —  
 Редакция на вестникъ  
 «Шаржумъ»  
 Варна  
 Redaction du journal  
 «Charjourn»  
 Varna (Bulgarie)  
 Իրանիակի էս չնն տրուի  
 Արևմտահայերէնի ձեռքի  
 ( 20 ԱՄԵՐԻԿԱ )  
 Պոլսի համար ձեռքի  
 = 15 ԱՄԵՐԻԿԱ =

ՇԱՐՋՈՒՄ Ի ՆՈՐ ԲԱԺԱՆՈՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԲԱԺԱՆԵՐԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵՐԸ

## ՄԵՐ ԲԱԺԱՆՈՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անշուշտ մեր չը վճարող բաժանորդները, եթէ վտար ինչ պարտաճանաչութեան զգացմունք ունին, կարգապիսի մեր նախորդ ազգերը որոնցմով կը յայտարարուէր թէ չը վճարող բաժանորդներու տնտեսները պիտի յայտարարուի ճարձուով մէջ : Գտնուեցան բաժանորդներ որոնք շտապեցին իրենց պարտքը վճարել. իսկ մէկ կարեւոր մասն ալ դեռ արձագանք չը տուաւ : Հիմա այդպիսիներուն կը յայտարարենք որ իրենց ժամանակ կը տրուի մինչեւ դեկտ. 15ը : Մինչեւ այդ օրը պիտի սպասենք. ու այնուհետեւ իսկոյն պիտի յայտարարենք :

## ԱՍՏՂԸ

ԱՍՏՂԸ, շատ խորը կապուտ անհունին,  
 Որչափ և մթին, այնչափ վեհուհին  
 Աստղ մը կայ թաղուած. ան ելած,  
 փայլած  
 Ու ետքը մարած, այլ չէ թէ  
 մեռած :  
 Գիտէք որն է այն ծեր աստղը,  
 — Գոռ հայաբնակ Սուրբ «Անցեալը»  
 Հեռուն, շատ հեռուն մօտ արեւ  
 Երկրի մէջ դրախտ մ'երկնային,  
 անգին  
 Աստղ մը կայ արնոտ գա՛նձ նուր  
 բախան,  
 Որ թէ և խուած, կորած չէ ոսկայն :  
 Գիտէք որն է այն մէկ աստղը  
 — Մեր խնկելի «Հայրենիքը» :  
 Հոն, այդ երկրին մէջ և աստղին  
 անգին  
 Միշտ տառապազին, խաղաղիկ բազ  
 դին՝  
 Աստղ մը կայ մոլոր—մարմին  
 անհուն,  
 Որ մեռնիլ չ'իյտի, այլ աստղ  
 անհուն :  
 Գիտէք որն է այն մէկ աստղը  
 — Դիանալի հայուն «ազգը»

## 50 ՓՐԱՆԿԻ ՀԱՄԱՐ

Անշուշտ մեր ընթերցողները յիշում են «Իրաւունք» խմբագիր Յակոբ Գուրպէթեանի խոստովանութիւնը ժէօն թիւրքերից յիսուն ֆրանք ստանալու համար : Այսօր Յ. Խաչիկեանի յայտարարութեամբ, պարզվում է որ Յակոբ Գուրպէթեանին ժէօն թիւրքերը ինքնաբերաբար չեն ուղարկել այդ 50 ֆրանկը, այլ վերջինիս խնդրանքով : Եւ խնդիրը նրանումն է որ Գուրպէթեան այդ գրամը կորզելու համար «ուրացել է իր հայրութիւնը և իբր թուրք է ներկայացել ժէօն թուրքերին. այդ պատճառով էլ նրանցից ստացել է պատշաճ յանդիմանութիւնը, համեմատ 50 ֆրանքով : Յակոբ Գուրպէթեան հրատարակում էր Հոգեւոր լրագիրը ոչ մաքուր նպատակով, այդ արդէն յայտնի էր. սակայն ոչ ոք, ի հարկէ նա ով Գուրպէթեանին ճանաչում էր իբր լուս հայ, կարող էր կարծել, թէ Յակոբ Գուրպէթեանը գրամի համար կարող է «ուրանալ և իր ազգութիւնը» : Այսօր գոթախտաբար, թերեւս բալերախտաբար, յայտնվում է որ «Իրաւունք» խմբագիր Յակոբ Գուրպէթեանը ուրացել է իր ազգութիւնը, թուրք տնտեսով գրամ է խնդրել ժէօն թիւրքերից և եթէ այդ գումարը աւելի մեծ գումար լինէր, նա դուրս գլխին նաև շալմա փաթթէր : Հիմա էլ մեզ ամենեւին զարմանալի չէ որ Յակոբ Գուրպէթեան «Իրաւունք» մէջ ամեն օր հակախաղաղական յօդուածներ էր տպագրում, հայ յեղափոխականների դէմ կուռում էր աւելի կատաղութիւն քան Պոլսոյ թուրք թերթերը : Յուզան իր փարգապետին ծօխեց երեսուն տրամաթով : Յակոբ Գուրպէթեան 50 արծաթի համար «ուրացել է իր ազգութիւնը» :

Ինչու չի կարելի ենթադրել որ Յակոբ Գուրպէթեան ու է գրամական ակնկալութեան համար է յարձակումներ գործում հայ յեղափոխականների դէմ, ճիգեր թափելով հայ յեղափոխականների վարկը կոտրել, և իր այդ ստոր գործը սքողելու համար, երբեմն վարնայի թուրք կոնսուլի, կամ նրա հայ գրագիր ազատա Չիլիկերեանի դէմ յարձակումներ է գործում : Յակոբ Գուրպէթեան կամ թուրք կառավարութեան գործիք պէտք էր դառնար, կամ ժէօն թիւրքերին. երկուսն էլ հակառակ են հայ յեղափոխական գործունէութեան : Այսօր նա չի կարող ուրանալ որ Հոգեւոր հրատարակում էր իբր ժէօն թուրք, որովհետեւ իբրեւ թուրք դիմել է ժէօն թուրքերի օգնութեան : Եւ այդքան զիջում անողը էլ ի՞նչ զիջումներ ընդունակ չի կարող լինել . . .

ՎԱՐԴՈ

## ՖՐԱՆՍԱ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Ֆրանսական նաւաբաժինը թուրքերի ջուրերուն մէջ է. Ֆրանսական կառավարութիւնը բացի զբաժանական պահանջէն և ուրիշ երեք պահանջքներ զրամ է Սուլթանին առջև, որոնք են՝ Գաղափարեալու պատրիարքին հաստատումը, ազատութիւն կաթիլիկ գաղութներ հիմնելու եւ եղածները պահպանելու եւ վերջապէս վերախնայութիւններ այն կաթիլիկ հաստատութեանց, որոնք աւելուր են հայկական կոտորածներու միջոցին : Հայոց խնդրի մասին Ֆրանսոյի ազգայնաբան պահանջներուն մէջ ոչ մէկ չաւ կայ : Ֆրանսական նաւաբաժինը թուրքերի ջուրերը գահած է միայն Ֆրանսոյի այդ պահանջներուն բաւարարութիւնը ստանալու համար : Ու սուլթանը Համիտ, որ մինչև օրս սին յոյսերով կորորուէր, պարտաւորուէր է յայտարարել Ֆրանսական խաղաղութեան ամսն պիտի կատարեմ ձեր պահանջները. աւելայն նաւաբաժինը տարեք, դուրս տարեք մեր ջուրերէն :

Ս. ԳՈՌԱՅՐ

Ֆոքշան 27 հոկտ.

Ի հարկէ Յրանսական նաւատորմիդը չի պիտի հեռանայ, մինչեւ որ իր ըրած պահանջներուն լիովին բաւարարութիւն ստանալու գրաւական մը չընդունի Սուլթանէն :

Սուլթան պիտի գիշանի, Յրանսա իր խօսքը քշել պիտի տայ, իր վարկը պիտի բարձրացնէ թուրքոյ առջեւ, բայց քաւորմէ մենք հայերս ի՞նչ օգուտ պիտի ունենանք, ոչ մէկ, եթէ շափազանցութիւն չէ ըսածս : Բնդհակառակը թերեւս վիսառութիւնը որովհետեւ Սուլթան իր պարտութեան վերջէն մեզմէ լուծելու տրամադրութիւնը պիտի ունենայ :

Այսպիսի յարմար պարագաներու մէջ ոչ մենք— ոչ մակեղոնացիները կրցանք ապստամբութեան գրօշը պարզելու, որ Յրանսան քիչ մը աւելի իրաւունք ունենար ստրուկներու պաշտպանութեանը ստանձնել, յայտարարելով որ արդէն այդ ժողովուրդներու ապստամբութիւնը ինքնին կը խանդարէ եւրոպայի խաղաղութիւնը եւ պէտք է շուտով անոր առջեւ աւելի հրդեհը աւելի չընդարձակուելու համար :

Այո, Սուլթանը պիտի կատարէ Յրանսայի պահանջները եւ մեզմէ պիտի լուծէ իր վրէժը, որովհետեւ Յրանսա, իր այդ պահանջները ըրած միջոցին, տակէն Սուլթանի ցոյց տուաւ եւ Պերլինի դաշնագրութեան Սուլթանը սարսափեցնող ուրուականը :

Ուրեմն եթէ մենք անկարող եղանք ապստամբիլ, միթէ եւ անկարող պիտի ըլլա՞նք, զմեզ պաշտպանել Սուլթանի կատաղի վրէժառութեան դէմ :

Եթէ մենք չը գիտցանք ամենէն յարմար վայրկիանին մեր ազատութեան համար կուրիլ, միթէ չի պիտի կրնա՞նք նպեւ այսուհետեւ ա-

ւելի եռանդով մեր դոյութիւնը պաշտպանել Սուլթանի գաւազրութիւններուն դէմ :

Մեր յեղափոխականները հիմա կրկնապատկելու են իրենց ճիգերը եւ ջանքերը ժողովրդին ինքնապաշտպանութեանը համար միջոցներ հայթայթելու :

Այլ ինչու համար են անոնք, որ ոչ ապստամբութիւն կրնան յաջողցնել եւ ոչ ալ կրնան ժողովուրդը պաշտպանել :

ԿԵՏ

Ս ԱԿԵՂՈՆԱԳԻ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆՆԵՐԸ



Մինչեւ վերջին ժամանակներս մենք սորված էինք Մակեղոնացի յեղափոխականներու միջեւ կատարեալ համերայնութիւն մը տեսնել, Անցեալ տարիները, եթէ նախկին կօմիթէն դժգոհ տարրեր ալ կային, բայց լուծ էին, որովհետեւ Բարձր Կօմիթէն մեծ եռանդով կը գործէր, կարեւոր ուժ մը դարձած էր ու ամէն մէկ դժգոհ սարկուած էր խոնարհիլ անոր ուժին, անոր եռանդին աւելի :

Այսօր բոլորովին տարբեր դրութեան մէջ կը գտնուին մեր բազմակից մակեղոնացի դործիչները, բաժանման, ատելութեան, հակառակութեան նշանները կամաց կամաց երևան կուզան :

Ժամանակ մը մեր յեղափոխականներուն մատնանիչ կըլլուէր

մակեղոնացիներու ձոյլ միութիւնը եւ հայ յեղափոխականը կը նկատուէր իբր բսամուլ, ազգին գերագոյն շահերը չը բռնող : Եւ այսօր ատոր հակառակ հայ յեղափոխականներու միջեւ դադրելու վրայ է կոյր ատելութիւնը ու ճիգեր կը թափուի միութիւնը ստեղծել, եւ մակեղոնացիներու մէջ է որ երեւան կուզայ բաժնուելու, անջատուելու ձգտումը :

Ասկէ կը հետեւցուի որ բնական է թէ հայերու նախկին վիճակը եւ թէ բնական է Մակեղոնացի յեղափոխականներու ներկայ վիճակը :

Հայ յեղափոխականները քուլտուրայէս բարձր էին Մակեղոնացի յեղափոխականներէն, եւ ասոնց անջատ գործնալու գլխաւոր շարժառիթը միայն բսամուլութիւնը եւ փառասիրութիւնը չէր, այլ եւ դաստիարակութեան, տեսակէտներու, քաղաքական պահանջներու տարբերութիւնը :

Մակեղոնացի դործիչները, իրենց գործունէութեան նախնական փուլի մէջ միայն մէկ նպատակ եւ մէկ պահանջ ունէին՝ Մակեղոնիոյ թուրքի լծէն ազատուիլը ու իրարմէ գրեթէ չէին տարբերուեր, սակայն երբ գործը մեծցաւ, երբ կազմակերպութեան մէջ մտան տարբեր կրթութեան, տարբեր զաղափարներու եւ տարբեր պահանջներու տէր դործիչներ, երեւցան եւ անհամաձայնութեան նշանները :

Ու այդ անհամաձայնութիւնը պիտի զարգանայ, հասնի իր գագաթնակէտին, տեղի պիտի ունենան հրապարակային կռիւներ, ընդհարումներ, ատելութիւն, մինչեւ որ կրկին միատեսակ մը տաճող, միմիայն հայրենիքին շահերը աչքի առջև ունեցող գործիչները, քննադատութեան, ներքին կռիւի քովէն անցնելով կրկին համախմբուին եւ այդ գծուարին գործը յառաջ տանեն :

Այդ այդպէս պիտի ըլլայ, եւ Մակեղոնացի գործիչները սրձափ ալ որ աշխատին արեւստական միջոցներով կարծուած վըստանգը խեղդել, չի պիտի յաջողին :

Յեղափոխութիւնը, ստրուկ ժողովրդի մը մէջ, պարբերաբար կը թուլնա, կուժեղնայ, կը հաւածուի, կը քարկոծուի մինչև որ կարենայ ժողովրդային մեծ զանգուածին մէջ հաստատարմանը բռնել :

Այն ինչ որ բնական է վտանգաւոր չէ, բնականապէս ալ պիտի բուժուի : Մակեղոնացիներու մէջ ներկայիս տեղի ունեցող դժգոհութիւնները, հակառակութիւնը բնական են եւ բնականապէս ալ պիտի վերջանան եթէ Մակեղոնացի ժողովուրդին համար ապստամբութիւնը գերագոյն պահանջ դարձած է եւ անոր ծոցին մէջ կան անձնուէր եւ յայտնուող գործիչներ :

Մենք կը հաւատանք որ կան եւ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՁԻԱՒՈՐԸ

Դավրէժը ընկղրուած է խաւարի եւ խորին լուռութեան մէջ, միայն լուռութեան մէջ անստիպան զամբիւն սոյլը եւ շէնքերի ունայրը : Գիշերին յառաջացած այս ժամին կարելի էր տեսնել միայն մի ճրագ, որ տակաւին փախելով էր անակի մը փոքրիկ սենեկի մէջ : Սենեկին արդուզարդը պարզութիւնն է մաքրութիւնն էր աւելի, նոյն սենեակում, Տիրանը գրասեղանի մօտ նստած է, նրա դէմքը է արտայայտում ու է որոշ զգացում, սակայն անբողոքութեան մէջ կայ մի այնպիսի բան, որ զտնազանուէր է Տիրանին հասարակ մահկանացուներից : Վաղածամ խորշոմները, այսերին գունատութիւնը աչքերին ցոլացումը, կարծել են տալիս թէ նրա հոգւոյն մը թին խորշոմում կան ծածկուած միջին եւ արեւան զգացումներ :

Աչքերը յառած թղթի մը վրայ, որ քարտէջ մը թուում է ըլլալ, ուշադիր, ինքն իրան մէջ անփոխ վնասում, գծում եւ երբեմն զլանիկէն բարձրացած ոլոր մոլոր խոպոպիներուն մէջ ինքնակորոյս մտածում է, ի՞նչ է մըտածում, այդ ամենը կը ծածկէ միութիւնը :

Գիշերը կանցնէր, բայց Տիրանը տակաւին արթուն, զրիչը ձեռին նա-

մակ է գրում, ժպտում, տիրում եւ երբեմն մի ասի է քաշում իր սրտին ամենախորունկ խորշերից, կարծես նա ուզում է այդ արտաք, շունչի մէկ հարուածով փնայնել ամէն բան եւ ակնթարթի մէջ թռչել, հասնել եւ տիրանալ իւր ցանկալի առարկային : Նստակը վերջացրեց, գրեց պահարանի մէջ եւ հարկը լսելի ձայնով շնջեց. — Ե՛րեւոյ է այս կը լինի իմ վերջին բարեւը, վերջին համբոյրը... :

Գարձեալ վեր վերցրեց քարտէջը, մի ինչ որ նոր բան նշանակեց նրա վրան եւ իր յիշատակարանի մէջ, յետոյ վեր կայացաւ, չը հեռանալով գրասեղանից եւ ձեռքը քարտիկին վրայ, շնջած, ասի, ինչ լաւ կը լինէր, եթէ կարելի լինէր կազմել Պարսկահայկական Գաշնակցական մի իշխանութիւն, մեղ հայերի եւ պարսիկների համար դա կը լինէր ամենանպաստաւորը, սակայն ավտոս որ, պարսիկը տրդի վիճակին մէջ ընդունակ չէ ըմբռնել ատոր կարեւորութիւնը, իսկ թէ աշխատիք օր մը, գործադրել տալ այդ գաղափարը, դա կարօտ է արդիների իսկ մինչեւ այն օր արդէն հայութիւնը կ'ոչնչանայ : Առ այժմ հայերիս համար ուրիշ բան չի մնայ, բայց միայն ընտելացնել հային արեւնի ու կրակի, հասկացնել նրան թէ իր ազատութիւնը ձեռք բերելը իր ամենաարդարան պարտականութիւնն է : Կը կատարեն, բայց միթէ ամէն բոլոր, ամէն ժամ, ամէն օր, չեն կատարում : Այո՛ կը կատարեն, բայց եւ այնպէս կը մնայ ամենաբնականը, որ կրնայ արթել այսօրուան հայութեան կրկինը, եռապատիկը, քառապատիկը : »

Դուրսը շնչում էր տակաւին սառնաշունչ քամին, կարծես նա աւելի սաստիկացել էր : Տիրանը ակամօք դրեց նրա ֆլշոյին եւ ստացաւ Ահա ամենանպաստաւոր դիշխաններից մին ու նայելով ժամացոյցին, շարունակեց.

— Արշալը հոս պէտք էր ըլլար այս ժամուս, Արդէն պատրաստ եմ գնալու հիմա էլ ինձ չը հետաքրքրեր աշխարհային կեանքը, չը հետաքրքրեր... Հոս կարծես մէկը սեղմեց նրա կուրծքը, նա լուեց ու տարեց... եւ սկսեց մտածել :

— Արեւունհի, միակ առարկան որ տակաւին կրնայ կապել ինձ այս կեանքին, իմ մահը կը ջախջախէ այն սիրտը, որ այնքան աշխուժ է եւ այնքան քնքուշ է, բայց միթէ նա ինքը չէ՞ր, որ դեռ եւս երկէ ինձ կրկնում էր. — Մեռի՛ր եթէ հարկ է մեռնիլ, մի՛ դառնար բնա, քո նպատակից, մեռի՛ր քաջի պէս եւ գեղեցիկ մահով պսակիր կեանքդ. — Էլ ի՞նչ կը մտածեմ, ի՞նչ պէտք է ինձ կեանք, երջանկութիւն, եւ միթէ կարելի է երջանկ ըլլալ, երբ հայրենիքը աւերակ է, ծաղկալիր դաշտերը արիւնոտ, եղբայրների եւ լիւրտած քոյրերերի արիւնով ներկուած : Ահա քամին զարկում է սկանջիս անմեղ մանկտիներէլ, կիների ողբը :

Այս պահուս դուրսը լուեց սուր ճիչ մը, քիչ յետոյ կրկնուեցաւ այս ձայնը, ինքը Արշակն էլ շնջեց Տիրանը գցեց ուսին հրացանը, դառնալով մէջքին կապեց եւ դուրս եկաւ սինեկից :

ԱՆՈՒՇԱՒԱՆ

կը մաղթենք որ շուտով կարենան կրկին իրենց վայել բարձրութեանը վրայ կանգնել և իրենց հայրենիքին ազատագրութեան գործին կանոնաւոր ուղղութիւն մը տան :

էն

Մ Ո Ւ Ր Ա Յ Ի Կ Ը

— 0 —

Անձրեւ կուգար, ձիւնախառն, ծերուկ մը, Հայաստանցի, Մ. քաղաքի մեծ ճամբուն վրայ, երեկոյան խաւարին մէջ թաղուած, առանց ձեռք երկնցնելու, անորոշ մրմունջով մը ոգորմութիւն կուզէ: Անցորդները չեն հասնար անոր ըսածը, շատ անգամ ալ ձայնը չեն լսեր, և կանցնին:

Ծերուկը աներես մտաբանիկ մը չէ. ան հացի համար չի մտաբար, այլ իր մէկ հատիկ զաւակին վրայ, որ օտարութեան մէջ իր շորքած բազուկներուն վրայ հագին աւանդեց, գերեզմանաքար մը դնելու համար:

Ծերուկին միակ խոհալը ատ է այժմ. տունը աւերակ դարձած է հայրենիքին մէջ, աղջիկները քրոջը վախճուցած են, իր մէկ հատիկ յոյսը ազան էր, մէկ ու ճար ազան, ան ալ մեռաւ օտար երկնքի աակ, յանձնուեցաւ օտար հողին. և քար մը անգամ չի կայ վրան:

Աւ ծերուկ Յունոն, ոգորմութիւն կուզէ այդ տապանաքարը դնելու համար:

Անձրեւ, ցուրտ, ձիւն, բուք Յունոն կանգնած է իր սեղը, առանց ձեռքը երկնցնելու, առանց որոշ բառեր արտասանելու. երբեմն ուրաւկանի մը, միս աշխարհէն դարձած ի մը կերպարանքը կառնու, բայց երբէք սարսափ չի ազդեր, այլ գոթ, ցառ ու տանջանք կը զարթեցնէ ամենէն քար սրտերու մէջ:

Հայ ժողովուրդին ամբողջ ցաւերու. թախանի, աւերման, կոտորածի, դժբաղդութեանց թողուցած տպաւորութիւններու ամբողջ գումարը դրօշմուած է Յունոյին կնճռաւ, սկսած դէմքին վրայ, որ պսակուած է վաղահաս ծերութեան արմատաթափել պսակով:

Կր մուրայ ան. հինգ տաս փառա հաւաքելով կուզէ շիրիմ մը կանգնեցնել անոր վրայ, որ իր օճախին ապաղան կը կայմէր, որուն մէջ ամփոփուած էին իր ամբողջ յոյսերը, երազները, շնորքները:

Բամի, փոթորիկ, տեղատարափ, Յունոն կ'սեղնած է իր տեղը. բայց օր մնալ զայն չի պիտի գտնենք հոն: Որովհետեւ արդէն իր նայատակին հասած և յաւիտենական հանգիստը առած պիտի ըլլայ:

\*\*\*

Թ Ղ Ր Ա Վ Յ Ո Ւ Թ Ի Կ Ն Ն Ե Ր

ՌՈՄԱԿ, 28 Հոկտ.

Ռոման քողաքը Ռուսմանիոյ հայաբնակ քաղաքներէն առաջինն էր գրեթէ. բայց այսօր դժբաղդատաբար ամենէն յետինն է այն պատճառով, որ վարժարան մը ունինք որ քաղաքի ամենէն նշանաւոր շէնքերէն մին է, բայց 13 ամիսներէ ի վեր փակ կը մնայ դժբաղդատաբար, զրկելով մեր մանուկները մայրենի լեզուէն: Եւ ասոր գլխաւոր պատճառը մի քանի շոկոյ հայերու անձնակոտն հակառակութիւնն է. կարծես մեզի ժառանգուած ըլլար որ ամեն տեղ մեր կ'իրքերուն գոհ ըլլան մեր զաւակները:

Տեղւոյ Տէր Ստեփան քահանան ալ չէ մոռցած իր կարգին առաջ քշել իր անձնական շահերը, օգտուելով ազգային գործերու անկերպարան վիճակէն:

Ահա այս երկպառակութեան հետեւանքը կը ըլլայ Ռուսմանցիներուն մեր վարժարանը վարձու ազելին, որ կը սուր թէ հաւանութիւն տրուած է տարեկան 6 հազար ֆրանքով: Ախոսս հաւար ամիս մեզի, որ 170 հազար ֆրանք ծախելով կառուցեր է անձ մը, Տիրա Թէոթորոս Սողոմոնեան, իսկ մենք, ամբողջ ազգ մը չենք կարող անոր գոյութիւնը պաշտպանել, այն ալ այնպիսի քաղաք մը. ուր տասնեակ միլիոնատէր հայեր կան: Օտարներ պիտի օգտուին մեր վարժարանով, իսկ մենք ողբալով մեր զաւակաց հետզհետէ օտարանալուն վրայ պիտի ըսենք «աւազ փառացս անցաւորին»:

Ահա բարոյական անկումը, որ հետզհետէ Ռուսմանիոյ հայութիւնը դէպի կորստեան գուռը կը տանի:

Ականջը խօսի անարժան պատրիարքին որ պատրիարքական գահը բազմելու արժանացեր է. կարծես երկու աչքերը կուրացեր են և չի տեսնար իր շուրջը անցած դարձածն. հոգ չէ, թող Սուլթանի արեւաշուքեան համար գովաբանակտն ազօթքներ կարգայ ինք, որպէս զի հայ կոտորելու ծրագիրը աւելի ընդարձակ է. հայ ժողովուրդը շատ բաներ տեսաւ օր մ'ալ ապականած դիակը կը տեսնայ և կ'աղաւտուի այդ պատուհասէն որ 5-6 տարիէ ի վնաս ազգին կը գործէ:

Իսկ տեղւոյս գաղթականութիւնը որ 25-30է կը բազկանայ բոլորն ալ աննախանձելի վիճակ մը ունին, մեծ մասը շաքարի գործարանը կաշիստին օրական 1-60 ան. չնչին գումարով մը, այն ալ իրենց առօրեայ պէտքերն չի բուեր. այս բոլոր

թշուառութենէն զատ իրենց մէկ մէկ փորձանք ալ աւելցուցած են. այսինքն բոլորն ալ առանց բացառութեան մէկմէկ ուսմանուհի առած նստած են, որ իրենց թշուառութիւնը աւելի կը բազմապատկէ: Հայաստանցի հեղու աչնիւ հայը այսօր իր բարոյականութիւնը կորսնցուցած, անձնատուր եղած է այն սոսկալի մոլութեան որ յատուկ է այս երկրին: Բնաւ չի հետաքրքրուիր հայրենիքով, յեղափոխութեամբ, ազգութիւնով ու ազատութիւնով: Մէկ խօսքով ոչինչ չէ կարելի սպասել. չունինք հոս այնպիսի անձնատուրութիւն մը որ քիչ շատ իրատէր և ետ կեցնէր այդ ընթացքէն. մեր քահանան ոչ հայ սրճարան կուգայ և ոչ ալ փողոցը հայաստանցի մը տեսած միջոցին անոնց որպիսութիւնը կը հարցնէ:

Ահա այս է Ռուսմանի հայոց արգի կացութիւնը:

ՀՐԱՆԻ

Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Ի Կ Ն

— 0 —

Գործ. ժողովս կուգայ հրապարակաւ իր խորին և անհուն շնորհակալութիւն յայտնելու այն ամէն պատ. ազգայնոց որոնք սիրով և յօժարութեամբ մասնակցեցան ինչպստ որբերու տրուած թատերական ներկայացման: Պատ. հայ. դերասանական «Վէսելո» խմբին: որ բոլորովին անձնուիրաբար յանձն առած և ամէն ջանք ի գործ դրած էր երեկոյթն սպասուածէն աւելի փայլուն ներկայացնելով հանդիսականաց բուն ծափահարութեանց արժանալով և խիստ գոհ թողլով որբախնամիս դիւանները: Տ. Տիրա Թէոթորոս Թիֆլիսցիքեանի որ թատերասրահ ձրիաբար որբախնամիս տրամագրելի ըրած էր: Այն աչնիւ օտարազգիներուն որոնք սիրով ընդունեցին իրենց ներկայացուած տոմսակները և թէ մասնաւոր նուէրներով մասնակցեցան երեկոյթին: Դաւ Էլ մոռնանք խորին շնորհակալութիւնն իս յայտնելու Իտալացի երկսեռ երգեցիկ խումբին որ ինքնաբերաբար փափաք յայտնեց անձնուիրաբար երգել և ալ աւելի փայլ մը տալ երեկոյթին:

Ուրախութեամբ և շնորհակալութեամբ կը յայտարարենք թէ, երեկոյթն ունեցաւ մօտաւորապէս 900 (ինն հարիւր) ֆր. զուտ հասոյթը—եթէ մեծ թատերասրահ մը ըլլար շատ աւելի ըլլալուն վտահ ենք—և որուն մանրամասն հաշուկշիւն պիտի հրատարակուի արդէն:

Պատ. ազգայնոց սոյն պարուստանալութեան և քաջալերու-

թեան աւթիւ Գործ. ժողովս երեք որբեր ևս որդեգրելու որոշումն տուաւ. որով որբախնամիս սաներու թիւը 15ի բարձրացաւ: Քաջայոյս ենք թէ. ինչպէս ցարդ պատ. ազգայինք իրենց նիւթական և բարոյական աջակցութիւն և քաջալերութիւն չեն զլացած հանդէպ որբախնամիս, վտահ ենք թէ որբախնամի միշտ պիտի վայելէ պէտք եղած քաջալերութիւն և աջակցութիւն և պիտի աւելցնէ իր խնամած որբերու թիւը Հայաստանի հայ որբանոցներու մէջ:

Մնամք յարգանք

Ի դիմաց Գործ. ժողովոյ Ատենադպիր Ատենապետ Յ. Կ. Ճանկիւլեան Ս. Մարինեան (Կնիֆ)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

— 0 —

Կը խնդրեմ հաճեցէք ներայոյ հրատարակել ձեր պատ. թիւթի յառաջիկայ թիւին մէջ այժմէն ընդունելով շնորհակալիքս:

Մանուանդ ժամանակէ մը ի վեր Պուլկարիոյ, մասնաւորապէս Սօֆիա ունեցած կուսակցական և անձնական հակառակորդներս զիս անուանարկելու համար ամեն ստորին միջոցներու դիմելէ վերջ կը տեսնեմ որ վերջերս աւելի կատաղած ընտանեկան խաղաղութիւնս տակն ու վրայ ընելու շափ յառաջ երթալու անխղճութեան մէջ կը գտնուին, որպէս ի՞նչ երկու տարի Սօֆիա և այժմ Սիւրսորէ վարժուհի մը հետ (որուն պատիւը այդ ստորիններու բոլորին պատիւէն հազարապատիկ իսկապէս բարձր է եթէ բաղդատել իսկ ներքի ըլլայ) սպորէն կը կենակցիմ և այս բոսակոտն չի սեպելով զիչեր ցորեկ աղջկան և թէ ինձ ինչ թապէս վնասելու ջանք ու աշխատանք չը խնայել:

Արգ յայտարարելով հանդերձ ի լուր աշխարհի որ այդ բոլոր ըստածները ու անտորագիր գրո ամենքը զուտ շարկիրքէ և վատ ողիէ առաջ եկած բաներն են և ոչ իր ուղու թիւն, միս կողմանէ ալ հրա էր կը կարգամ հակառակորդներուս, որ յայտնի համարձակ հրապարակելու ենք և հաստատեն իրենց ըսածները մինչեւ մէկ ամսուան մէջ, հակառակ պարտազային բոլոր անցուղարձերն իրեն ամեն պարտազայինք հրատարակել զկնի խնդիրն ալ պիտի յանձնեմ արգարտութեան ատեանին ի պաշտպանութիւն պատուոյս և ի պաշտպանութիւն պատուոյ աչնիւ բարեկիրթ, ազատամիտ և պատուոյ տէր օրիորդի մը որ դարպապարտած անուանարկութեան ենթակայ եղած է:

ՏԱՄԱՏ ՊԵՅԼԷՐԵԱՆ Սիւրսորէ, 26 Հոկտ.

ԻՐԱՆԻՆԻ ԽՈՐԱԳՐԻՆ

«Իրանուք»ի 78րդ. թուոյն մէջ հասոր մատնութիւն մը վերնագրով տեսութիւն մը կը հրատարակէիք Վահան Մազմանեանի նամակին առթիւ, շատ իրաւացի կերպով ճահրիմանի և Սարգիսեանի ամենատորին արարքը կը հրապարակէիք իբրև զաղափարի դատաճաններ ներկայացնելով զանոնք. «Երկու թիւրք հայրենասէրներ» ստորագրած բտեսական նամակին առթիւ, բայց ի՞նչու ինքզինքնիդ ալ միասին չէիք խայտառակեր ձեր մէկ հին արարքին համար, այսինքն «ժէօն թիւրք» մը ստորագրութեամբ, անոնց կուտակցութեան գրած նամակնիդ որով նիւթական վարձատրութիւն մը խնդրած էք. ինքզինքնիդ անոնց դատին մէկ զոհը նկատելով և յաջողած էք 50 ֆրանքի գումար մը ստանալ և հետեւ ալ նամակ մը որ ձեզ կըսէին թէ—մենք քու հայ ըլլալդ գիտենք ի՞նչու թուրք գիմակի տակ կը ներկայանաս մեզի. Հիմակ դուք, ճահրիմանէն և Սարգիսեանէն ի՞նչ արբերութիւն ունիք:

Յ. ԱՍՉԻԿԵԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

«Կազէթ տը Գոյունի» Բեթերսպուրկէն կը հաղորդեն թէ՛ լուր կը պատի որ Ռուսիա և ֆրանսա որոշած են միասին Սուլթանին գործադրել տալ Պերլինի դաշնագրութեան մէջ խոստացուած Հայաստանի և Մակեդոնիայի բարենորոգումները. Պերլինի դաշնագրութիւնը ստորագրող միւս պետութիւններէն ալ պիտի խնդրեն աջակցելու իրենց:

Կրօնն նաև որ մտերս վեհաժողով մը պիտի տեղի ունենայ չէ թէ Պերլինի դաշնագրութիւնը քննելու, այլ զայն գործադրելու համար:

Ռուսական վարիչ շրջանակներու մէջ կը յուսան որ դաշնագիրը ստորագրող բոլոր պետութիւններն ալ պիտի համաձայնին վեհաժողովին մասնակցելու: Սակայն այդ վեհաժողովը 1902 թ. մառտէն կանուխ չի կրնար տեղի ունենալ:

Վիեննայէն բացարձակապէս կը հերքեն Սուլթանի Անգլիային

գիմելու և անոր օգնութիւնը խնդրելու լուրը: —Սօֆիայի ռուսական հիւպատոսը Միսս Սթոնէն նամակ մը ընդունած է որուն մէջ Միտիոնարու հին կը հաղորդէ որ, թէ ինք և թէ պուլկարուհի Տիկին Յիլկան «Ռոզը վիճակի մէջ կը գտնուին սակայն Տիկին Յիլկան կարելի է որ շուտով ծնի:

ԹՈՒՐԻ ՖՐԱՆՍՍԱԿԱՆ ՎԷՃԸ

Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը, Պոլսոյ գործակառարէն ընդունած է Բ. Գրան համաձայնութիւնը ֆրանսական պահանջներու մասին:

Հիմա, կը խորհուի ատոր պատասխանի մասին:

Հոկտեմբեր 25ին «Թան» իր Պոլսոյ թղթակցէն հետեւեալ հեռագիրը ընդունած է.

Երեքշաբթի, ճաշէն վերջը, ֆրանսական գործակառարը ամիրալ Բէյարէ հեռագիր մը ընդունած է, որով Բէյար կը հաղորդէ նաւատորմիդին Միտիլին կղզին առջեւ հասնելը, խոստանալով մանրամասնութիւնը նամակով հաղորդել:

Այդ լուրը պալատին մէջ մեծ իրարանցում ձգեց, ինչպէս և պաշտօնական շրջանակներու մէջ որովհետեւ մինչև վերջին վայրկեանը չէին հաւատար, որ Ֆրանսիա սոյդ պիտի որոշում մը կուտայ, Բ. Գրանը իսկայն շտապեց թիւրքի և Լորանտոի պահանջներուն զուգարին հաշիւը Բապարի զրկել, գրաւական տալով ձաքատանց արդիւնքները:

Բապարի Բարիզէն հրահանք խնդրեց, Պալատը կրկին Ռուսիոյ միջամտութիւնը խնդրեց, բայց մերժում ստացաւ:

Դիւանագիտական շրջանակներու մէջ ֆրանսայի բռնած կորովի զիրքը մեծ գոհութիւն առաջ բերաւ, որովհետեւ ֆրանսայ սպիտով ամէն եւրոպական պետութիւններու շահերը կը պաշտպանէ:

Այստեղ այսօր լուր հասաւ որ ֆրանսական նաւատորմիդը Լէվան կերթայ, և Բէյար արդէն քանի մը մաքսատուներ գրաւած է:

Պոլսէն Սօֆիայի վրայով կը հեռագրեն «Թան»-ի որ Ամիրալ Բէյար արդէն Միտիլին կղզի իջած է և մաքսատուները տիրած, կղզիին միւթէսէրիքի և նահանգապետի հետ երկար տեսակցութիւն մը ունեցեր է:

Մովսիսի զինուորները բռնած են մաքսատուները:

— Թէֆթ փաշան ֆրանսական գործակառարին յիշատակագիր մը յանձնած է որով կը յայտարարէ թէ Բ. Գրանը մեծ վափաք ունենալով վէճը վերջացնել հա-

մաձայն է կատարել երեքշաբթի օրուան յիշատակագրին մէջ թուած պահանջները. այսինքն Սուլթանը համաձայն է ճանչնալ ֆրանսական դպրոցներու գոյութիւնը, որ մինչև օրսինք չէր ճանչցած, երկրորդ կընդունի որ կրօնական և բարեգործական հաստատութիւններու համար մաքսային զիջողութիւններ ըլլան: Երրորդ կը համաձայնի հայկական կոտորածներու միջոցին ֆրանսական հովանաւորութիւնը վայելող աւերուած դպրոցները և բարեգործական հաստատութիւնները վերաշինելու իւրաքիչ հաշիւին:

Իսկ ինչ կը վերաբերի զաղափարի պատրիարքին հուշարմանը իր սյաշտօնին մէջ թէֆթ փաշան յայտարարած է որ անոր պէրաթը արդէն Մոսուլ զրկուած է:

Կրտսի թէ Սուլթանը նոյնապէս մը բոլոր պետութիւններուն յայտարարած է որ վէճը վերջացեր է:

ՊՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԸ ՎԷՃԻ ՄԱՍԻՆ

Անգլիական Տէյլի նիւս թերթը ըսէ որ ֆրանսա արժանի է ամբողջ քաղաքակիրթ աշխատանքի երախտագիտութեան քանի որ ամէնուրեք հրատարակած ամէն զանապիւր և մարդկային օրէնքները բռնաբարողը:

— Գերմանական մամուլը քաջալերելով ֆրանսայի վճռողական քայլը անգլիացիները կը զոգոն ֆրանսացիներու զէմ:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Լի Հունկ Չանկի մահը կարելի է որ յիշ մը դժուարութիւններ յաբուցան է, որովհետեւ ան չիճացին էր որ թէ կայսերական տան մէջ ազդեցութիւն ունէր և թէ ընդունակ էր Եւրոպացիներու հետ զիւանագիտական յարաբերութիւններ պահպանել:

— Իշխան Չուն հեռագիր ընդունած է երթալ Բէյար սպառելու երբ կայսերական անէն կրկին հեռագիր ընդունի սահման երթալ կայսեր զիմաւորելու:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայգիրբերգում հիմնել է մի գրադարան, որ նպատակ է գրել ծանօթացրնել արտասահմանի հայ ուսանողութեան և ընդհանրապէս հետաքրքրող բնձանց հայոց ներկայ կեանքին վերաբերեալ հայերէն և օտար լեզուով լոյս տեսած գրքերի հետ: Գրադարանը ունի յիշալ նպատակով հրատարակած գրքերի մի համեմատ թիւ որի համար յայտնում ենք նուիրատու անձանց մեր խորին շնորհակալութիւնը և խնդրում ենք այն անձանց հա տատութիւններին, որոնք կամենում են գրքերով և ներատուութիւններով օգնել գրադարանին, բարեհաճին ուղարկել հետեւեալ հասցեով:

A. Iohannessian Heidelberg Kaiser 31 № 5

ԽՐԱԿՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄ»Ի

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւորման, հասցէտոման, նամակագրուի, հարսանեկան հրաւերագիր, մահապաշտ:

Գիները յոյժ դիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՉՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆՈՒՄ

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Դարձ, գնտակ. — Այն անձը որին պիտի յանձնուի ձեր նակակի, Թարքիոյ մէջ ձերբակալուած է, նամակը անկարելի է իրեն յանձնել Կորդէն արդեօք որ նամակը վերստացրենք ձեզ:

— Չերնա—Վոտա Գ. Գ. մինչև որ բաժնեկիւնը չստանանք, թերթ չգրկեր:

ԵՆՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս Միութեան նամակ ուղարկելու և առհասարակ ամէն տեսակ զիմում ընելու համար պէտք է գրիւն հետեւեալ հասցեով Իւնիսե սե Զ'էդիսիսե Աւր. Լ'էօրոք րիւ սը Լ'էօլ սը Շիւի 2

Սուխ Ժընէվ Կարգողիւ Յանձնաժողով

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Sof. V. Snsnikhulցի և Ե. Թոփչիսուցի «Die sozial-ökonomisch Türkei» Հաւաքական աշխատութիւնը Հայկական հարկի և ընդհանրապէս թուրքիայի մասին: Գինը 2 մարկ ճանապարհածախսով գրիւն Berlin, Verlagshandlung R. Prager, №W. 7

Ա Չ Դ

Կը ծախուի 1896ին փետր. 2ին իշխան Պօրիտի մկրտութեան առթիւ տպուած գործածուած նամակաղբոջներ 1—5—15—25 սանդղիմ:

Իրմի՛ ՄՆՍՐԱՊ ՄՈՒՐԱՏԵԱՆ Վառնա

Отговорникъ: Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна